Հայ-Ռուսական համալսարանի

ՀՀ ԲՈԿ-ի իրավագիտության 063 մասնագիտական խորհրդին

(Հասցե՝ 0051, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան,

Հովսեփ Էմինի փողոց, 123)

13.11.2023

ԿԱՐԾԻՔ

պաշտոնական ընդդիմախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու,

դոցենտ, Դավիթ Արտյոմի Թումասյանի

Բաղդասարյան Մարիամ Ռոմանի իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման՝ «Առանձին դաժանությամբ կատարված սպանությունների քրեաիրավական բնութագիրը և որակման հիմնախնդիրները» թեկնածուական ատենախոսության վերաբերյալ ԺԲ.00.05 – Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք մասնագիտությամբ.

Թեկնածուական ատենախոսության շրջանակներում՝ հրապարակային պաշտպանությանը ներկայացված Մարիամ Բաղդասարյանի գիտական ուսումնասիրությունը վերաբերում է ծանրացնող հանգամանքներում կատարված սպանության առավել բարդ տեսակներից մեկին՝ առանձին դաժանությամբ կատարված սպանությանը. դրա քրեաիրավական բնութագրին և որակման հիմնախնդիրներին, որոնք գիտագործնական տեսանկյունից պահանջում են նոր տեսաիրավական լուծումների անհրաժեշտություն՝ հաշվի առնելով 2022թ.-ի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի կարգավորումները: Արդի փուլում հատկապես կարևորվում է մարդու դեմ ուղղված հանցագործությունների որակման հիմնախնդիրների լուծումը՝ հաշվի առնելով ՀՀ

քրեական նոր օրենսգրքում հանցակազմերի վերանայումը և նոր հասկացությունների ներմուծումը:

Թեկնածուական ատենախոսությունը և նրա սեղմագիրը՝ բովանդակային և կառուցվածքային առումով, համապատասխանում են նման աշխատանքներին ներկայացվող պահանջներին: Գիտական աշխատության ծավալը կազմում է 204 էջ, այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ հեղինակին հաջողվել է հիմնավորել թեմայի արդիականությունը, որի հիմքում ընկած է առանձին դաժանությամբ կատարված սպանությունների որակման հիմնախնդիրները՝ նոր օրենսդրական փոփոխությունների, դատաքննչական պրակտիկայի և տեսական մեկնաբանությունների համատեքստում, ինչը և պայմանավորել է ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, հետազոտության օբյեկտն ու առարկան, թեմայի մշակվածության աստիճանն ու տեսաիրավական, փորձարարական և մեթոդաբանական հիմքերը: Առանձնահատուկ ուշադրության է արժանի հետազոտության գիտական նորույթը, որն արտահայտված է պաշտպանությանը ներկայացված 11 դրույթներում, որտեղ գիտական նոր առաջարկների ներդրման նպատակով, ներկայացված են ինչպես տեսական, այնպես էլ գործնական առաջարկություններ՝ ուշադրություն դարձնելով ոչ միայն առանձին դաժանությամբ կատարված սպանությանը, այլ նաև սպանության այլ տեսակներին, որոնք առնչվում են ուսումնասիրության առարկայի հետ: Ներածության մեջ հիմնավորվում է նաև հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը, նրա բովանդակային կառուցվածքի՝ հետազոտության նպատակներով և գիտագործնական խնդիրներով պայմանավորված լինելը:

Ատենախոսության առաջին գլխում (էջեր 20 - 68) հեղինակի կողմից ուսումնասիրված է առանձին դաժանությամբ կատարված սպանությունների օրենսդրության պատմաիրավական զարգացումը, առանձին դաժանության գնահատողականությունը, դրա բազմազանությունը և կիրառումը քրեական իրավունքում:

Ատենախոսության երկրորդ գլխում (էջ 69 – 139) մանրամասն ուսումնասիրված են առանձին դաժանությամբ կատարված սպանությունների օբյեկտիվ հատկանիշները, մասնավորապես՝ օբյեկտիվ կողմը՝ ուշադրություն դարձնելով հանցագործության կատարման եղանակին, մեկնաբանելով դրա դրսևորման առանձին ձևերը, համեմատություններ անցկացնելով հանցագործության կատարման այլ եղանակների, մեթոդների և միջոցների հետ: Հատուկ ուշադրություն է դարձվում խոշտանգմանը՝ որպես հանցագործության կատարման եղանակի, ինչպես նաև օբյեկտիվ կողմի այլ հանգամանքներին:

Գիտական աշխատության երրորդ գլխում (էջ 140 - 182) պարզաբանված են առանձին դաժանությամբ կատարված սպանությունների սուբյեկտիվ հատկանիշները, որտեղ հատուկ ուշադրություն է դարձվում մեղքի և դիտավորության հարաբերակցությանը, քննարկվող հանցագործության շարժառիթը և նպատակը, փաստական սխալի պայմաններում որակման առանձնահատկությունները, ինչպես նաև առանձին դաժանությամբ կատարված սպանությունների տարանջատումը հարակից հանցագործություններից:

Գիտական աշխատության եզրակացության մեջ ամփոփված են կատարված ուսումնասիրության արդյունքները՝ եզրահանգումների և առաջարկությունների տեսքով, ինչը թույլ է տալիս դրական կարծիք կազմել ատենախոսության մասին:

Սակայն, վերջինս զերծ չէ նաև բովանդակային և տեխնիկական որոշ թերություններից, որոնց վերաբերյալ ներակայացնում եմ մասնագիտական դիտարկումների արդյունքում ստացված հետևյալ դիտողությունները, որոնք չեն ազդում ատենախոսության գիտական որակի վրա, բայց վկայում են առանձին դրույթների հստակեցման կարևորության մասին:

Առաջին՝ պաշտպանությանը ներկայացվող 3-րդ դրույթում (ատենախոսության էջ 11, սեղմագիր էջ 9) վերջին պարբերությունն անավարտ է և դրանից պարզ չէ, թե հեղինակը նշելով՝ «արձանագրված բացթողումներն ու թերությունները վերացնելու, առանձին դաժանության դրսևորման դեպքում հանցակազմի կիրառման օրենսդրական սահմանափակումները հաղթահարելու, առանձին դաժանությամբ կատարված

սպանության օբյեկտիվ գնահատական և պատկեր ունենալու նպատակով», արդյունքում ինչ է առաջարկում: Քանի որ արդյունքը նշված չէ, հետևաբար հնարավոր չէ նաև պարզել այդ արդյունքին հասնելու կամ չհասնելու փաստը և, հետևաբար նաև՝ պաշտպանության ներկայացվող դրույթի իրականացման աստիճանը:

Երկրորդ՝ 63-րդ էջի վերջին պարբերությամբ հեղինակը նշում է, որ «ՀՀ քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներում որպես արարքը ծանրացնող հանգամանք է սահմանվում «դաժան վերաբերմունքը», «անձնական արժանապատվությունը պարբերաբար ստորացնելը», «ծաղրուծանակը», «տանջանքը», «խոշտանգումը», «ֆիզիկական կամ հոգեկան տառապանք պատճառելը»....», սակայն ՀՀ քրեական թե՛ նախկին, թե՛ նոր օրենսգրքերը չեն բովանդակում այնպիսի ծանրացնող հանգամանքներ, ինչպիսիք են՝ «անձնական արժանապատվությունը պարբերաբար ստորացնելը», «ծաղրուծանակը», «տանջանքը» և «խոշտանգումը» (միայն այս եզրույթը որպես ծանրացնող հանգամանք կիրառվում է ՀՀ քրեական նախկին օրենսգրքի միայն մեկ՝ 341-րդ հոդվածի 2-րդ մասում):

Երրորդ՝ 3-րդ գլխի 4-րդ պարագրաֆը ներկայացված է «Փաստական սխալն առանձին դաժանությամբ կատարված սպանության դեպքում» վերտառությամբ, սակայն հեղինակի կողմից այդ հարցի վերլուծության ընթացքում անդրադարձ չի կատարվել ՀՀ քրեական նոր օրենսգրքի 28-րդ հոդվածին (Սխալն արարքի փաստական հանգամանքների մեջ), ինչից ելնելով առաջարկվող որոշ լուծումները հակասում են նոր օրենսդրությամբ տրվող կարգավորումներին, օրինակ՝ 176-րդ էջի վերջին պարբերությամբ տրվող լուծումը:

Չորրորդ՝ ատենախոսության 89-րդ էջի երրորդ պարբերությունում և 122-րդ էջի առաջին պարբերությունում կիրառվում է «զոհ» եզրույթը, որն ատենախոսության համատեքստում կիրառվող եզրույթներին համահունչ չէ:

Եզրակացություն: Մարիամ Ռոմանի Բաղդասարյանի իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման՝ «Առանձին դաժանությամբ կատարված սպանությունների քրեաիրավական բնութագիրը և որակման հիմնախնդիրները» թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն, արդիական, նորույթ պարունակող համալիր գիտական ուսումնասիրություն է, որը

համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջներին: Ատենախոսության հեղինակն արժանի է ԺԲ.00.05 – Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
իրաբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ Դ.Ա. Թումասյան

Դ.Ա. Թումասյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Հայ-Ռուսական համալսարանի
գիտական քարտուղար՝
բ.գ.թ. Ռ.Ս.Կասաբաբովա